



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՏԱՏ)

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՄՍՏԱՏԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Հիմնական արժեքներ.

- համապատասխանություն,
- ճշգրտություն և արժանահավատություն,
- յուրաժամանակություն և ճշտապահություն,
- համաձայնեցվածություն և համադրելիություն,
- մատչելիություն և պարզություն,
- վիճակագրական գաղտնիություն,
- դեպի օգտագործող կողմնորոշում,
- հանրային թափանցիկ բանավեճ:

Ակնկալվող փոփոխություններ.

Օգտակար է այն վիճակագրությունը, որից օգտվում են: Վիճակագրական տվյալներն արխիվի համար չեն հրապարակվում: Եթե վիճակագրությունը որոշումների ընդունման գործիք չէ և չի նպաստում իշխանությունների ու հանրության կողմից սոցիալ-տնտեսական երևույթների համապատասխան ընկալմանը, ապա այն չի ծառայում իր հիմնական նպատակին:

Վիճակագրության վերակառուցման առաջնահերթ ուղղություններից մեկը վիճակագրական տեղեկատվության տարածման և հաղորդակցության փորձի ու դրանց վարման քաղաքականության նորացումն է, այդ բնագավառում նոր մոտեցումների կիրառումը:

ԱՐՄՍՏԱՏ-ը պետք է շարունակի վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում վիճակագրության համակարգային վերափոխման գործընթացները՝ վիճակագրական տեղեկատվության օգտագործողների (հետայսու՝ օգտագործողներ) կարիքների առավել ամբողջական և օպերատիվ բավարարումը:

Վիճակագրական տեղեկատվությունը, ինչպես ցանկացած ապրանք, պետք է համապատասխանի քանակական և որակական չափանիշների ամբողջական շարքի պահանջներին (բովանդակությունից մինչև տարածումը):

Տեղեկատվության հասանելիությունն առավել արդյունավետ կդառնա տեղեկատվության տարածման և հաղորդակցության արդի միջազգային փորձի ներդրմամբ:

Վիճակագիրները կարիք ունեն օգտագործողի հետ գերակտիվ հաղորդակցման և նրանց տարբեր խմբերի հետ համակարգված մոտեցման, քանզի տարբեր խմբեր ունեն տարբեր կարիքներ, ուստի ծառայությունների միատեսակ մատուցումը թերի ու անբավարար կլինի:

Վիճակագիրը պետք է ճանաչի իր օգտագործողին և ճիշտ հասկանա մատուցված ծառայություններից նրա բավարարվածության աստիճանը և/կամ դրանցից անբավարարվածության պատճառները՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու դրանց վերացման ուղղությամբ:

Ներկայում օգտագործողը բնութագրվում է վիճակագրական փոփոխվող կարիքների ամբողջությամբ. այն ինքնին ենթադրում է նորարարական տեղեկատվատեխնոլոգիական զարգացում:

Համաշխարհային գլոբալիզացիայի (համընդհանրացման) խորացման, սոցիալական նոր երևույթների և ֆինանսատնտեսական ճգնաժամերի ազդեցության պայմաններում օգտագործողների խտացված հետաքրքրությունը վիճակագրական տեղեկատվության նկատմամբ առաջադրում է նոր մոտեցումների ներդրում ու ընդլայնված կարիքների բավարարում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների շարունակական կատարելագործման արդյունքում վիճակագիրներին հասանելի են դառնում բազմաբնույթ, բազմաշերտ և լայնածավալ տվյալներ, որոնք վիճակագրության համար կարող են լինել նոր ռեսուրսներ և աղբյուրներ:

Հաղորդակցման նոր միջոցները և հարթակները հնարավորություն են ընձեռում ընդլայնելու վիճակագրական տեղեկատվության տարածման և հաղորդակցության մասշտաբները, տեսանելիությունը և թափանցիկությունը: Միևնույն ժամանակ, ռեսպոնդենտների (վիճակագրական տեղեկատվության տրամադրողների) կողմից առավել հարմար և դյուրին է դառնում էլեկտրոնային եղանակով տեղեկատվության տրամադրումը:

Հասարակության ինտեգրումը դեպի տեղեկատվության թվային աշխարհ իր հետ բերում է նաև վիճակագրության ոլորտին անհրաժեշտ հասանելիություն: Ընդլայնվում է տվյալների թվայնացումը, որը ենթադրում է վիճակագրական տեղեկատվության տարածման և հաղորդակցության կատարելագործում: Այդ գործընթացը պետք է կազմակերպել առավելագույն զգուշությամբ և նրբանկատությամբ, որ երբևիցե չխախտվի վիճակագրության հանդեպ վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների և օգտագործողների վստահությունը՝ հիմնվելով Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքների վրա (հիմնականում՝ ռեսուրսների համապատասխանություն, որակի հանձնառություն, անկողմնակալություն և օբյեկտիվություն, յուրաժամանակություն և ճշտապահություն, ծախսերի արդյունավետություն, ճշգրտություն և արժանահավատություն, համաձայնեցվածություն և համադրելիություն, մատչելիություն և պարզություն, հիմնավորված մեթոդաբանություն և այլն):

Տնտեսության գլոբալացման պայմաններում ավելի շատ, քան երբևէ վիճակագրությունն անհրաժեշտություն ունի հանրությանը հասանելի դարձնել աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական երևույթների զարգացումները և միտումները, բնակչության ժողովրդագրական իրավիճակը և այլն:

Հայաստանի վիճակագրության ինտեգրումը և ներդաշնակեցումը միջազգային վիճակագրությանը դառնում է հրամայական, հրատապ և արդիական՝ նպատակ ունենալով ապահովել վիճակագրական տեղեկատվության տարածման որակ, ինչպես

նաև հնարավորություն ընձեռել օգտագործողին՝ իրականացնելու նախընտրելի ձևաչափով և իրեն անհրաժեշտ համեմատություններ ու համադրումներ:

Վերջին տարիներին օգտագործողների շրջանում հանրային քննարկումները, հարցումները և ուսումնասիրությունները ցույց են տվել աճող հետաքրքրություն և ուշադրություն այնպիսի վիճակագրական տեղեկատվության նկատմամբ, ինչպիսիք են. սոցիալ-տնտեսական իրավիճակը, գործազրկությունը, աղքատությունը, շրջակա միջավայրը, ինչպես նաև բնակչության կյանքի տևողությունը, հիվանդացությունը, կենսապայմանները և այլն:

Վիճակագրության կողմից այս ամենի արտացոլումը, ներկայացումը և տարածումը դառնում է հանրության հրամայական կարիք և սպասում: Սրանք անհրաժեշտ միտումներ են, որ կհանգեցնեն վիճակագրության տարածման և հաղորդակցության ոլորտում ընթացիկ որոշումների ընդունման և մոտեցումների հստակեցման: Արդյունքում, օգտագործողների մշտապես աճող և փոփոխվող կարիքներն իրենց հետ կբերեն ճկուն և ակնկալվող վիճակագրության ներդրում՝ նույնիսկ ֆինանսական միջոցների սղության պայմաններում:

Միաժամանակ, պետք է շարունակաբար արդիականացվի վիճակագրական տեղեկատվությունը և կատարելագործվի համակարգվածությունը պաշտոնական վիճակագրություն իրականացնող մարմնի և վարչական ռեգիստրների միջև, ինչպես նաև խստացվեն պահանջները վիճակագրական տեղեկատվության որակի և դրանց փաստաթղթավորման նկատմամբ, ինչն էլ կապահովի վիճակագրության բարձր հուսալիություն, լիարժեք օբյեկտիվություն, հիմնավորվածություն և անաչառություն:

1. Ծառայություններ

ԱՐՄՍՏԱՏ-ն արտադրելով պաշտոնական վիճակագրություն՝ կազմակերպում է տնտեսական և հասարակական գործընթացների ու դրանց արդյունքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության մշակում և սահմանված կարգով հանրությանը վիճակագրական տեղեկատվությամբ ապահովում:

Միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված վիճակագրական չափանիշներին և նորմերին համապատասխան, ԱՐՄՍՏԱՏ-ն իր գործունեությունն իրականացնում է վիճակագրության միասնական մեթոդաբանության վարմամբ (միջազգային մեթոդաբանական ուղեցույցներ, ձեռնարկներ և այլն), ինչպես նաև վիճակագրության ոլորտին առնչվող դասակարգիչների կիրառմամբ:

ԱՐՄՍՏԱՏ-ն ապահովում է վիճակագրական տվյալների արժանահավատություն, ճշգրտություն, համադրելիություն ժամանակի հնարավոր երկար հատվածում և

տարածության մեջ, գաղտնիություն, արդիականություն, կայունություն և ամբողջականություն, ինչպես նաև վիճակագրական ամփոփ տվյալների պարբերական հրապարակում, տարածում, հաղորդակցություն, հասանելիություն:

ԱՐՄՍՏՍՏ-ն օգտագործողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա բավարարում է նրանց վիճակագրական կարիքները, ուստի դրանց առավել հստակ իմացությունը և դրանք նկատելու ունակությունը տեղեկատվության տարածման և հաղորդակցության տեսլականին հասնելու հիմնական նախապայմանների առաջնային շարքում է:

ԱՐՄՍՏՍՏ-ի օգտագործողները բաժանվում են հետևյալ հիմնական խմբերի. պետական կառույցների ներկայացուցիչներ, ֆինանսական կազմակերպությունների, գործարար համայնքի, արհմիությունների, զանգվածային լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների, գիտակրթական և հետազոտական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն:

Օգտագործողների կարիքների ուսումնասիրության խորացումն առավել արդյունավետ կդառնա, եթե ԱՐՄՍՏՍՏ-ն ամրապնդի օգտագործողների հետ քննարկումներին մշտական մասնակցությունը՝ բացահայտելու նրանց թաքնված կարիքները և իրականացնելու համապատասխան բարեփոխումներ իր ծառայությունների մատուցման գործընթացում:

Օգտագործողների կարիքների իմացությունը գերագույն նպատակ է. ինչին պետք է հասնել ժամանակն ու տարածությունը մեկ ծիրի բերելով, առավել հաճախ կազմակերպելով երկխոսություններ և հանրային քննարկումներ:

ԱՐՄՍՏՍՏ-ն երկխոսություններին և հանրային քննարկումներին ավելի ակտիվորեն պետք է ներգրավի նաև վարչական ռեգիստրների ներկայացուցիչներին, քանզի նրանց ներկայությունը և մասնակցությունը կարող է ավելացված արժեք տալ թե՛ վիճակագրությանը և թե՛ օգտագործողին, արդյունքում՝ բարելավել նաև վարչական վիճակագրությունը:

Մեկ այլ կարևոր խնդիր է օգտագործողի հատուկ (կոնկրետ) կարիքի բավարարումը: Այս դեպքում ևս ԱՐՄՍՏՍՏ-ը պետք է դառնա ավելի նրբանկատ և ճկուն՝ օգտագործողի հետ շփման և երկխոսության միջոցով հայտնաբերելու և հստակեցնելու այդ կարիքները:

Զանգվածային լրատվամիջոցները և հետազոտություններ իրականացնողներն օգտագործողների հիմնական թիրախային խմբերից են: ԱՐՄՍՏՍՏ-ը կարևորելով նրանց կարիքները ևս, պետք է հետամուտ լինի դրանց բավարարմանը՝ նպաստելով վիճակագրության առաջխաղացմանը:

Պաշտոնական վիճակագրությունը բարելավվում է, երբ ողջ տեղեկատվությունը հավաքվում է մեկ միասնական պորտալի մեջ: Այն պահանջում է լավ գործող, արդյունավետ և ժամանակակից պաշտոնական կայք, որն ինքնին միտված է օգտագործողների պահանջների բավարարմանը:

ԱՐՄՍՏԱՏ-ի պաշտոնական կայքերը՝ <http://www.armstat.am>, <http://www.armstatbank.am>, ինչպես նաև <http://microdata.armstat.am/index.php/home> և <http://sdg.armstat.am/am/> հարթակներն օգտագործողների հետ հիմնական կապուղին են: Դրանք վիճակագրության համապարփակ հարթակներ են, որոնցում առկա են ԱՐՄՍՏԱՏ-ի պաշտոնական վիճակագրությունը, ինչպես նաև ԱՐՄՍՏԱՏ-ից դուրս արտադրված վարչական և միազգային վիճակագրությունները:

ԱՐՄՍՏԱՏ -ը բարելավում է տարածման ռազմավարությունը.

ա. Հարմարվել օգտագործողների նոր և փոփոխվող կարիքներին,

- նախապես հայտարարել որևէ ցուցանիշի հրապարակման ամսաթվի ուշացման, փոփոխման կամ չհրապարակման մասին, իսկ հետաձգման դեպքում՝ պաշտոնական կայքում տեղադրել հայտարարություն,
- վիճակագրական հրապարակումներում նախնական, հաշվարկային կամ վերանայված ցուցանիշների ճշգրտման դեպքում տալ համապատասխան ծանոթացում և/կամ ավելացնել ճշգրտման նշան (✧),
- վիճակագրական հրապարակումներում հնարավոր սխալների հայտնաբերման դեպքում ուղղումները կատարել հնարավորինս արագ և հրապարակել ԱՐՄՍՏԱՏ-ի պաշտոնական կայքում այնպես, որ հստակորեն երևա, թե փաստացի ինչն է ուղղվել,
- օգտագործողի համար ստեղծել տվյալների միասնական բազա, որտեղ հնարավորինս խմբավորված լինեն բոլոր առկա բազաները,
- զարգացնել նոր և գոյություն ունեցող վիճակագրություն:

բ. Ավելացնել թափանցիկություն հանրային քննարկումներում.

- խորացնել զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցությունը/ հաղորդակցումը՝ ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից սոցիալ-տնտեսական միտումների վիճակագրության ներկայացման միջոցով,
- կազմակերպել օգտագործողների հետ հանդիպումներ, որի ընթացքում քննարկել ընտրված արդիական թեմաներ,

- մշակել արտաքին և ներքին օգտագործողի ուսուցման տարեկան ծրագիր՝ համապատասխան թեմաներով և թիրախային խմբերի ներգրավմամբ,
- բարելավել վիճակագրության տարածումը և հաղորդակցումը:

գ. Ներառել օգտագործողի կողմից ակնկալվող տեղեկատվություն վիճակագրական հրապարակումներում.

- ընդլայնել վիճակագրական միջազգային համադրումները, համեմատությունները և զարգացնել տարբեր վիճակագրական կառույցների կողմից հրապարակված տեղեկատվության ներկայացումը,
- ընդլայնել պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների և վարչական ռեգիստրների կողմից վարվող վիճակագրության հրապարակումների ցանկը,
- արտացոլել նոր ձևավորվող վիճակագրական տեղեկատվությունը:

դ. Խորացնել օգտագործողների տարբեր խմբերի հետ համագործակցությունը.

- ուսումնասիրել և տեղայնացնել միջազգային փորձը,
- հնարավորություններ ստեղծել միջազգային փորձի փոխանակման արդյունքում ձեռքբերված նոր գիտելիքների տարածման համար,
- ընդլայնել դպրոցների, բարձրագույն ուսումնական, գիտակրթական և գիտահետազոտական հաստատությունների ներկայացուցիչների հետ համագործակցությունը,
- խորացնել և ամրապնդել պետական կառավարման մարմինների, ֆինանսական կազմակերպությունների, գործարար համայնքի, քաղաքացիական հանրության և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունները:

ե. Արդիականացնել պաշտոնական վիճակագրության պորտալը.

- ստեղծել նոր թեմատիկ վիճակագրական մուտքեր,
- հրապարակումների և/կամ տվյալների բազաների մեջ դյուրին որոնման հնարավորություն ընձեռել օգտագործողներին,
- ապահովել առավել ճկուն որոնման կարողություն,
- ներդնել բաժանորդագրություն,
- օգտագործողի ինքնասպասարկման տեսանկյունից տեղեկատվության տարածման և հաղորդակցման գործընթացում առաջնահերթությունը տալ էլեկտրոնային տարբերակին (օրինակ՝ www.armstatbank.am կայք),

- <http://www.armstat.am/> և մյուս կայքերի միջոցով առավել ամբողջական բավարարել օգտագործողների կարիքները և տալ նրանց կարծիքի առաջնահերթություն:

գ. Իրականացնել համատարած հաշվառումների (գյուղատնտեսական համատարած հաշվառում, մարդահամար) տվյալների հրապարակման և տարածման ռազմավարություն

- շարունակական սկզբունքով վիճակագրական տեղեկատվության օգտագործողներին տրամադրել համատարած հաշվառումների ամփոփ արդյունքներ,
- վիճակագրական տեղեկատվության օգտագործողների շրջանում պահպանել հետաքրքրությունը համատարած հաշվառումների նկատմամբ՝ պարբերաբար տարածելով տարաբնույթ վիճակագրական տեղեկատվություն:

2. Գործընթացների զարգացում.

- Տարեկան վիճակագրական ծրագրի նախագիծը կազմելիս խորացնել և ընդլայնել վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների և օգտագործողների կարծիքի ու պահանջմունքների ուսումնասիրումը, վարել դրանց իրականացման մշտադիտարկում,
- կանխատեսել օգտագործողների հետագա պահանջները, արագ արձագանքել դրանց, տեղեկատվությունը մշակել և տրամադրել օգտագործողին իրեն հարմար եղանակով,
- օգտագործողների խմբերի (մասնավորապես՝ թիրախային) հետ հաստատել արդյունավետ կապեր՝ նրանց մշտապես տեղեկացնելով վիճակագրական նորությունների մասին,
- ապահովել մամուլի ասուլիսների, հարցազրույցների, ճեպազրույցների հաճախակի կազմակերպումը,
- շարունակել ակտիվորեն պատասխանել լրատվամիջոցների հարցումներին՝ խուսափելու ապատեղեկատվությունից և թյուրըմբռնումներից, իսկ նման դեպք բացահայտելիս հնարավորինս կարճ ժամանակահատվածում կապ հաստատել հոդվածագրի հետ և խնդրել, որ նա շտկումներ մտցնի իր հրապարակման մեջ,
- օգտագործողների կարիքների ուսումնասիրությունների և հարցումների արդյունքում բացահայտել նրանց կարիքները, խնդիրները և նպատակները,

- մշտադիտարկել ԱՐՄՍՍԱՏ-ի գործունեության լուսաբանումը, վերլուծել վիճակագրությանն առնչվող լրատվամիջոցների հրապարակումները և անհրաժեշտության դեպքում արձագանքել դրանց,
- օգտագործողի կարիքների բավարարման նպատակով ԱՐՄՍՍԱՏ-ի բաց գրադարանը հագեցնել համապատասխան տեխնիկատեխնոլոգիական սարքավորումներով՝ այն դարձնելով առավել ինտերակտիվ և ներդաշնակ, մշտապես թարմացվող և արդիական:

3. Տվյալների գաղտնիության ապահովում.

«Վիճակագրական գաղտնիության և բացառապես վիճակագրական նպատակներով օգտագործման» սկզբունքն ամրագրված է «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքում, համաձայն որի սահմանված է, որ պաշտոնական վիճակագրություն արտադրողների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերող՝ հավաքված կամ ստացված բոլոր անվանական տվյալները խիստ գաղտնի են և կարող են օգտագործվել բացառապես վիճակագրական նպատակներով:

Անվանական տվյալները, որոնց վրա տարածվում է վիճակագրական գաղտնիության սկզբունքը, այն տվյալներն են, որոնք թույլ են տալիս կամ կարող են թույլ տալ ուղղակի կամ անուղղակի նույնականացնել վիճակագրական միավորները՝ դրանով բացահայտելով անվանական տեղեկություններ:

Պաշտոնական վիճակագրության բոլոր արտադրողներն ապահովում են անվանական տվյալների, գաղտնի ագրեգացված ցուցանիշների և վիճակագրության պաշտպանությունը, ինչպես նաև վիճակագրության պաշտպանությունը մինչև դրա տարածումը, և ձեռնարկում են անհրաժեշտ կարգավորիչ, վարչական, տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներ՝ կանխելու այդպիսի տվյալներին հասանելիությունը լիազորություն չունեցող անձանց կողմից:

Վիճակագրական գաղտնիք պարունակող տվյալները բացառիկ դեպքում կարող են տրամադրվել կամ հրապարակվել անհատական (անվանական) տվյալների ուղղակի բացահայտման հնարավորություն չստվող ձևով և մասով՝ գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ:

Բոլոր տվյալները, որ հրապարակում է ԱՐՄՍՍԱՏ-ը և այն տվյալները, որոնք տրամադրվում են օգտագործողների պահանջներին համապատասխան, ներկայացվում են ագրեգացված ձևով:

Վիճակագրական գաղտնիք հանդիսացող տվյալները, առանց դրանց ներկայացնողի համաձայնության, հրապարակման կամ այլ ձևով տարածման ենթակա չեն: Համաձայնությունը կարող է պարունակել տվյալների օգտագործման վերաբերյալ սահմանափակումներ: Տեղեկությունների չհրապարակման կամ այլ ձևով չտարածման դրույթը չի գործում այն դեպքում, երբ դրանք բնական կամ այլ մենաշնորհային գործունեությունն արտացոլող տեղեկություններ են, որոնց չհրապարակումն (չտարածումն) էապես կազդի վիճակագրական տեղեկատվության ամբողջականության սկզբունքների պահպանման վրա:

4. Ակնկալվող (սպասվող) փոփոխություններ

- վիճակագրության տարածման և հաղորդակցության շարունակական բարելավում,
- վիճակագրության տարածման և հաղորդակցության ռազմավարության գործարկում,
- պաշտոնական վիճակագրության պորտալի արդիականացում,
- օգտագործողների նոր և փոփոխվող կարիքների առավել ամբողջական բավարարում,
- հանրային քննարկումներում թափանցիկության ապահովում,
- օգտագործողների տարբեր խմբերի հետ համագործակցության ամրապնդում,
- օգտագործողների խմբերի ներգրավմամբ վիճակագրական ուսուցման տարեկան ծրագրի հետևողական գործարկում:»